

For Immediate Distribution

**Dzoraket, Armenia. June 7th, 2019** – From 1<sup>st</sup> to 7<sup>th</sup> of June 2019, twenty-seven researchers gathered in Armenia for The First Armenian Workshop on Graphs, Combinatorics and Probability. The purpose of the workshop was to collaborate on solving open problems in mathematics, in particular, in the area of combinatorics and graph theory.

The workshop took place at the Tufenkian Avan Dzoraket Hotel in the region of Lori. The researchers – mathematicians and computer scientists from various universities including Oxford, Cambridge, Sorbonne and London School of Economics – travelled to Dzoraket from the USA, Australia, UK, Canada, France, Spain, Germany, Belgium and Armenia. Attendees brought with them a few of their favourite open problems that they presented on the first day of the workshop. The remainder of the week was spent on working together to solve the presented problems. By the end of the workshop, the researchers had developed key insights and arguments that would lead to the partial or complete solution to these problems. The results will eventually be submitted for publication in academic journals.

The invitation-only workshop organizers made efforts to include participants from Armenia. Through a merit-based selection process, the organizers invited two graduate students from Yerevan State University to take part in the week-long workshop. This was made possible due to the contributions of the foreign participants, who raised funds to support this endeavour.

During their week in Dzoraket, the researchers also took time off from mathematics to visit local heritage sights. These visits were in the form of hiking trips, the first between the monasteries of Odzun and Kobayr, the second between the monasteries of Haghpats and Sanahin, while the third hike took them on a climb up Mount Lalvar.

“It was a wonderful workshop with a great cross-section of researchers from combinatorics, probability and mathematical machine learning,” said Professor Louigi Addario-Berry from McGill University. “For me personally, it was quite a success. My group made progress on the topic I brought to the meeting. The small scale made it easy to find time to work with a range of different researchers, some of whom I met for the first time. I particularly enjoyed working with Aram Gharibyan and Armen Davtyan, who proposed some interesting and clever new ideas in the course of our discussions.” Of Armenia, he continued, “The setting is one of the most spectacular places I’ve ever visited - it was a real treat to be able to come here for professional reasons. I’m sure the subsequent workshops in this series will be equally successful.”

The First Armenian Workshop on Graphs, Combinatorics and Probability was organized by:  
Bruce Reed – Professor at McGill University and a Fellow of The Royal Society of Canada  
Liana Yepremyan – Postdoctoral Researcher at the University of Oxford, former graduate of Yerevan State University and McGill University.  
Perouz Taslakian – Applied Research Scientist at Element AI, formerly Professor, Chair of Computational Sciences Program at the American University of Armenia.

Contact: for more information please contact Liana Yepremyan ([yepremyan@maths.ox.ac.uk](mailto:yepremyan@maths.ox.ac.uk)) or Perouz Taslakian ([perouz@elementai.com](mailto:perouz@elementai.com)).

<https://www.cs.mcgill.ca/~perouz/gcp2019/>

Ենթակա է տարածման

**Ձորագետ, Հայաստան, 2019 թ. հունիսի 7** – 2019 թ. հունիսի 1-ից 7-ը, քսանյոթ հետազոտող գիտնականներ Հայաստանում մասնակցել են առաջին հայաստանյան աշխատաժողովին գրաֆների, կոմբինատորիկայի և հավանականության թեմայով: Աշխատաժողովի նպատակն է համագործակցել մաթեմատիկայի բնագավառում դեռևս առկախված խնդիրների լուծման շուրջ, մասնավորապես կոմբինատորիկայի և գրաֆների տեսության բնագավառում:

Աշխատաժողովը կազմակերպվել է Լոռու մարզում, Թուֆենկյանի Ավան Ձորագետ հյուրանոցում: Տարբեր համալսարանների, այդ թվում՝ Օքսֆորդի, Քեմբրիջի, Սորբոնի և Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի հետազոտող մաթեմատիկոսներ և ինֆորմատիկներ Ձորագետ են եկել ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Միացյալ Թագավորությունից, Կանադայից, Ֆրանսիայից, Իսպանիայից, Պերուից, Գերմանիայից, Բելգիայից և Հայաստանից: Մասնակիցներն իրենց հետ բերել են իրենց նախասիրած չլուծված խնդիրները, որոնք ներկայացրեցին աշխատաժողովի առաջին օրը: Շաբաթվա մյուս մասը նրանք համատեղ աշխատեցին ներկայացված խնդիրները լուծելու ուղղությամբ: Մինչև աշխատաժողովի ավարտը հետազոտողները ձևավորեցին հիմնական տեսակետներն ու փաստարկները, որոնք կնպաստեն խնդիրների լուծմանը: Արդյունքները ներկայացվելու են ակադեմիական ամսագրերին՝ հրատարակման նպատակով:

Աշխատաժողովի կազմակերպիչները ջանքեր են գործադրել հրավիրյալ մասնակիցների ցանկում նաև ընդգրկելու հայաստանաբնակ հետազոտողների: Այդ նպատակով հայտերի մրցույթ է հայտարարվել, որի արդյունքում ընտրվել են Երևանի պետական համալսարանի երկու ուսանող՝ հիմնվելով նրանց մասնագիտական ձեռքբերումների վրա: Այս երկու ուսանողների մասնակցությունը հնարավոր եղավ միայն օտարերկրացի մասնակիցների ֆինանսական աջակցության շնորհիվ, որոնք գումարներ հավաքեցին հայ ուսանողների ներկայությունը ապահովելու համար:

Ձորագետում անցկացրած այս շաբաթվա ընթացքում հետազոտողները նաև մաթեմատիկայից որոշ ժամանակ հատկացրեցին այցելելու հայաստանյան պատմամշակութային վայրեր: Կազմակերպվեցին քայլարշավներ դեպի Օձունի և Քոբայրի վանքեր, երկրորդ քայլարշավը Հաղպատի և Սանահինի ուղղությամբ էր, իսկ երրորդը՝ Լավար սարի ժայռամազլցումն էր:

«Արգասաբեր աշխատաժողով էր՝ կոմբինատորիկայի, հավանականության և ինֆորմատիկայի միջոլորտային բնագավառի հետազոտողների հիանալի մասնակցությամբ», - նշեց Մըքգիլի համալսարանի պրոֆեսոր Լուիջի Ադդարիո-Բերին: «Անձամբ ինձ համար սա միանգամայն հաջողված էր: Իմ խումբը առաջընթաց գրանցեց իմ ներկայացրած թեմայի ուղղությամբ: Փոքր մասշտաբը հնարավորություն տվեց ժամանակ գտնել և աշխատել տարբեր հետազոտողների հետ, որոնցից ոմանց առաջին անգամ էի հանդիպում: Ինձ հատկապես դուր եկավ աշխատելը Արամ Ղարիբյանի և Արմեն Դավթյանի հետ, ովքեր մեր քննարկումների ընթացքում մի շարք հետաքրքիր և խելացի գաղափարներ առաջարկեցին: Իսկ այս վայրը իմ այցելած ամենատեսարժան վայրերից է՝ մեծ բավականություն էր մասնագիտական նպատակներով այստեղ գալը: Համոզված եմ, որ այս շաբթի հաջորդ աշխատաժողովները հավասարապես հաջողված կլինեն»:

Գրաֆների, կոմբինատորիկայի և հավանականության թեմայով առաջին հայաստանյան աշխատաժողովի կազմակերպիչներն են՝  
Բրյուս Ռիդը – Մըքգիլի համալսարանի պրոֆեսոր և Կանադայի Թագավորական միության անդամ,  
Լիանա Եփրեմյան – Օքսֆորդի համալսարանի երիտասարդ գիտնական, Երևանի պետական համալսարանի և Մըքգիլի համալսարանի շրջանավարտ,  
Փերուզ Թալաքեան – Կիրառական հետազոտող Էլեմենտ ԷյԼյ-ում, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի հաշվողական գիտությունների ամբիոնի նախկին վարիչ:

Կապ՝

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Լիանա Եփրեմյանին (yepremyan@maths.ox.ac.uk) կամ  
Փերուզ Թասլաքեանին ([perouz@elementai.com](mailto:perouz@elementai.com)):  
Աշխատաժողովի կայք՝ <https://www.cs.mcgill.ca/~perouz/gcp2019/>